

խանը, որ ըստ երեւոյթին չկայ. այլ դրական զուրցուածքն է որ կը շարունակէ նա և յաջորդ պարբերութեան մէջ: Յանձանաւոր մտքէ ստեղծուած բանը, անշուշտ մոյսը լինելու է:

Էջ 29. տող 11. « Եւ յայսմանէ՛ զոր լուաք, յայտ եղև՝ եթէ ոչ միայն անհրեւոյթ էր երկիրը, և անպատրաստ »:

Ուղղ. « այլ և անպատրաստ »:
Որովհետեւ ջրեր ծածկելը էին՝ ուրեմն անհրեւոյթ էր. դարձեալ անոնք էին պատճառ եւս անպատրաստ լինելուն բուսականութեան և անասնոց համար:

Հմտ. էջ 29, տող 16:
Էջ 30. տող 15. « Ո՛ր գայլը յափըշտակողը իցեն որ ոչ ատտին հարին խնամ, և հարին հօտս ի հօտից Քրիստոսի »:

Ուղղ. կորստեան? գայլը՝ ոչ աշխարհի (աստեղաց) համար չխնայեցին Քրիստոսի հօտին, այլ անոր համար որ լարութիւն և ստորիւն անոնց մէջ բոյն ղրբեր էր, և Քրիստոսի հօտին կորստեան պատճառ դարձան:

Հմտ. Կաթող. Պետրոսի Բ. գլ. Բ. 1:

Հ. Գ. ՆԱԶԱՐԵՏԻԱՆ

Շարայարեղի

ԵՒԹԵՐԻՈՍ ՇԱՅԿԱՉ

Թուրքական Ուրացողի (361-363) արքանաց մէջ, որ թաղկացած էր իմաստասերներէ և զօրավարներէ, կը գտնուէր եւս Հայ մը. Եւթերիոս:

Այս անճառութիւնը, որ պէտք է իր դերն ունեցած ըլլայ Թուրքիոսի և Հայոց մէջ եղած յարեւոյթեանց ժամանակ, աշխի մեծ եղաւ իբրեւ մարդ, քան իբրեւ քաղաքագետ:

Բայց առաքիւնութիւնը ետագ պարծանք մը չէ քան քաղաքիւնն ու մեծագործութիւնը. և հետաքրքրական կը համարուիք օտար պատմի մ'այն հաստատար, որ իր նկարագրին հիացկոտ ներքողը կ'ընէ:

Այդ պատմիչն է Ամմիանոս Մարկելլի-

նոս. ի ծնէ յոյն էր, բայց գրած է լատիներէն. կ'ապրէր Դ դարուն մէջ. ձամբորդած է Հայաստան իբրեւ զինուոր, և շատ հաւանօրէն անձամբ տեսած մեր Արշակ Բ.ը, որուն վրայ խօսած է ընդարձակօրէն: Թե՛րեւ մասամբ տեղեակ էր եւս հայերէնի: ԺԻ գլխուն մէջ կ'ըսէ. « Հոն կը գտնուէր աղեղնաւորաց գնդին (comitum sagittariorum) մեծագոյն մասը, այսինքն հեծեալներ՝ այսպէս կոչուած գնդին, որ կը զբոսին բոլոր ազնուական բարբարոսները՝ որ ուրիշներէն վեր են իրենց զէնքերովն և ոյժերով զօրութեամբը »:

Աղեղնաւորաց գունդը թաթը ոյիւն ունի յատուկ՝ որպէս զի հարկ ըլլար ըսել՝ « այսպէս կոչուած գնդին », ուստի ետրպացի գիտնականը կ'ոգնէ հասկնալ « Աղեղնաւոր կոմսեր »: Բայց Հայոց մէջ դեռ եւս չէր սկսած կոմս թաթի գործածութիւնը, և այս տիտղոսը այնքան մեծ էր՝ որ անհասանկարն էր գունդ մ'ենթադրել, ուր ամեն զինուոր կոմս կոչուի: Comites թաթին մէջ հայերէն գունդը թաթը կը տեսնենք. բերես գունդ արշաւ կունեաց թաթը (comites arsakidorum) չհասկցող ընթերցողներու շնորհիւ՝ եղած է « comites sagittariorum ». Ամմիանոս Մարկելլիոս կը յիշէ թէ Պարսից քաղաքները Saansah (Շահնահ) և Perozes (Պերոզ-յարոզ) կը կոչուին: Արեւելեան իրաց տեղեակ մ'է, որուն մէկ էջը այստեղ կը ներկայացնենք:

Ս. Տ.

« Կոստանդ տարածուած լուրերէն իմանալով որ Մարկելլոս օգնութիւն չէ տարած Սենտիայի քով պաշարուած Կեսարու (Բուլխանոսի), Մարկելլոսը պաշտօնանկ ընելով, իր տունն երթալ հրամայեց »:

Որ, իբրեւ ծանր անիրաւութեան մը զոհ գացած, ոճիր մը կը մեքենայէր Յուլիանոսի դէմ, վստահելով կայսեր ակնաջնջութուն վրայ՝ որ ամէն բանի բաց էին:

Ուստի, երբ նա մեկնեցաւ, իր ետեւէն ուղարկուեցաւ Եւթերիոս սենեկապանը, որպէս զի զայն յաղթահարէ, եթէ նա սուտեր հնարէ:

Սակայն նա , այս բանս չգիտնալով , հազիւ Միլան հասաւ , երբ սկսաւ աղմկել , շփոթել , ունայնախօս ըլլալով՝ ու խելազարթ մօտ :

Խորհրդարանը մտնելով՝ գիտլիսնոս ամբաստանեց իրը անբերս . « առիկի քարոճ քաջնու համար , առիկի զօրատոր փետտորներ կը դնէ » . այսպէս կ'ըսէր նա՝ մարմնոյ մեծ մեծ շարժումներ ընելով :

Երբ նա այսպէս համարձակ կը խօսէր , Եւթերիոս , իր խնդրանաց համեմատ ներս մտնելով , և հրաման ստանալով՝ ուզածը խօսելու , ամօթխած և չափաւորեալ կերպով իմացուց՝ թէ ճշմարտութիւնը քողարկուած էր ստութեամբք , թէ հեծեալներու զօրավարին (ինչպէս որ կը կարծուէր) աւջակցութենէ դադրելէն վերջը , Սենտնայի քով պաշարուած կեսաբը իր քաշութեամբ ետ մղած էր բարբարոսաց արշաւանքնեւր՝ իր արթուն ճարտարութեամբ , թէ նա ցկեանս հաւատարիմ էր կայսեր , և այս բանս՝ իր կեանքովը կ'երաշխաւորէր :

Իրը կը յորդորէ քանի մը բան ըսել այս Եւթերիոսի վրայ , որ թերեւս անհաւատալի թուի , վասն զի եթէ նոյն իսկ Սոկրատ կամ Նիսա Պոմպիլիոս ներքեւնիի մը վրայ զովեստ խօսին , և ըսածնին երդմունքով ալ հաստատեն , ճշմարտութենէ զարտուզած պիտի համարուին : Սակայն վարդն ալ փուշերու մէջ կը ծնանի , և զազաններու մէջ ալ կան՝ որ կ'ընդելանան :

Ուստի իր յատկութեանց վրայ գիտցածներս համառօտիւ ցոյց պիտի տամ :

Նա ծնած էր Հայաստանի մէջ , ազատ արիւնէ : Պշտիկ եղած ժամանակ դրացի ազգերէն զերի բռնուելով , ծախուեցաւ մեր երկրի վաճառականներուն և կոստանդիանոսի պալատը բերուեցաւ : Մեծնալով , Եւթերիոս սկսաւ տակաւ ցոյց տալ բարի վարք և խելացիութիւն , իր վիճակին բաւող գիտութիւն , տարակուսական կամ տագնապեցուցիչ զործերու մէջ խորհելու և գտնալու մեծ սրամտութիւն , առաւելման յիշողութիւն . ազաւ բարիք ընելու , լի արգար խորհուրդներով :


Եթէ կոստանդ Եւթերիոսի , որ ի պատանկութենէ արդէն ծերունի էր , ուղիղ և համեստ խորհուրդներուն մտիկ ըրած ըլլար , բնաւ կամ քիչ պիտի սխալէր :

Յուլիանոսի սննկապան ընդունուելով , Եւթերիոս շատ անգամ կը սրբազնըր զանիկա , որովհետեւ Յուլիանոս ասիական բարքերով մեծցած ըլլալով , քիչ մը թեթեւ էր : Հանգիստ ընելու ուզարկուելով , յետոյ վերստին արքունիք կանչուելով , միշտ ժուկկալ , և իր նկարագրին մէջ հաստատ եղաւ , և միշտ կատարեալ կերպով պահեց հաւատարմութիւն և զաղտնապահութիւն . ուրիշներու պէս չէր այրեր աւելին ունենալու փափագով : Ուստի երբ առանձնացաւ ի Հոռոմ , հոն հաստատեց բնակարանը և ծերացաւ , բարի խղճմտանքը իր իւր իրերէ ընկեր տանելով . ամէնքէն սիրուած էր ու պատուուած : Շատ կը տարբերէր այն տեսակ մարդիկներէն , որոնք ընդհանրապէս անիրաւութեամբ հարստանալէ վերջ , մութ անկիւն մը կը փնտռեն , լոյսէն փախչող բուհակի պէս , իրենց ընչաքաղցութեանը զոհ գաղողներու նայուածքներէն խոյս տալու համար :

Որուն հետ կարող եմ զինքը համեմատել իր դասակարգի նախնեաց մէջէն : Հնութիւնը ընդերկար պրպտելով կարող չեղայ գտնել : Վասն զի հնոց քով եղան , թէպէտ շատ քիչ՝ ընտիրներ և հաւատարիմներ , բայց միշտ ախտով մ'արատաւոր . վասն զի ի բնէ կամ ի կրթութենէ ստացած գեղեցիկ յատկութիւններուն հետ՝ ու մանց ընչաքաղց եղան , աւելի պարսաւելի իրենց անգթութեամբը , կամ փութկոտ ու շողջորթ կամ զօրութեան արտաքին ցոյցերով հպարտ : Իմ բոլոր ժամանակակիցներուս վկայութեան վրայ հաստատուած՝ կը պնդեմ թէ՛ ոչ մէկ տեղ կարողացեր կամ լսեր եմ որ մէկը ամէն տեսակէտով իրեն չափ կատարեալ եղած ըլլայ : Սակայն եթէ հնութեանց խղճահար ընթերցող մը առջեւնիս հանէ Միլոդատի՝ Պոնտոսի արքային՝ Մենոփիլոս պալատականը , թող ուշ դարձնէ այս դիտողութեան վրայ որ անոր վրայ ոչինչ կայ պատ-

մուած, բաց ի անկից՝ գոր փառօք գոր-
ծեց գերագոյն վտանգի մը մէջ, վերոյի-
շեալ թագաւորը մեծ ճակատամարտով մի-
ջողովայնեցոց և Պոմպէոսէ յաղթուելով,
փախչելով դէպ ի կողքիսի թագաւորու-
թիւնները, Սիւնհորիոս զոգեակին մէջ թո-
ղուց իր Գրիւպետիսն դուստրը, որ հի-
ւանդ էր, Մենոփոլոսի յանձնելով՝ որ
պէտք եղած դեղերով կոյսը առողջացնէ.
ասոր հօր՝ խնամքով ծառայեց, երբ Ման-
լիոս Պրիսկոս Հռովմայեցի զօրավարին տե-
ղակալէն իրեն զոգեակը պաշարուած տե-
սաւ և իմացաւ որ պահապանները անձ-
նատուր ըլլալ կը խորհին, և վախնալով
որ մի գուցէ իր սիրով նախասիրեց մ'ըլ-
լայ՝ ազնուական գերիին ապրելովն և բռ-
նաբարութեամբ, զանկաւ սպաննեց, և յե-
տոյ սուրը իսկոյն իր մարմնոյն մէջ մխեց:
Բայց զառնանք ուսկից մեկնեցանք: Մար-
կեղղոս յաղթահարուեցաւ, արքայութեամբ
Մարդիկէ, ուր ծնած էր »:

Երբ գծտութիւններ ծագեցան Յուլիա-
նոսի և Կոստանդի մէջ, Եւթերիոս կրկին
քաղաքական ասպարէզ եկաւ իրբնի դե-
պան Յուլիանոսի, թէպէտ Կոստանդ ի-
րեն ներկայացուած նամակէն զայրացած՝
դուրս վռնեց Եւթերիոսն և իր պաշտօ-
նակիցները (Ամիանոս Մարկելլինոս, Գլ.
Ի. Բ):



ԱՆՏԻՊԵՋԵՐ



Մեր միաբանակից վիր. Յ. Համազասպ վ.
Չափարեամ մուիրեց Ս. Ղազարոս մատենադա-
րանին, ի միջի այլոց, ձեռագիր Տաղարան մը,
որ ճոխ հաւաքածոյ մ'է և կը պարունակէ հա-
րիւր քսանէ մաւելի տաղեր, որոնց մէջ բարե-
բախտաբար կամ բաւական թուով կտորներ՝ զորս
տեսած չէի մեր մատենադարանի ձեռագրաց մէջ:
Մոյմ Տաղարանը ոչ թէ միայն իրբնի ճոխ հա-
ւաքածոյ մը յարգի է մեզ, այլ վասն զի զայն
հաւաքողն և օրինակողն է Մոսփառոս երէց թո-
խաթեցի, որ ծանօթ էր իմ իր քերթածներով
և իրմէ օրինակուած տաղերու փոքր հաւաքա-
ծոյով մը:

Ձեռագիրս միջակաղիր, գրուած թուղթի վրայ՝
մօտ 600 էջէ, բոլորգիր մաքուր և ըմթեմըլի
յէջ 556 ունի հետեւեալ յիշատակարամբ. « Գրե-
ցաւ ազգիս և պատուական և ըմտիր տաղերս ի
յաստուածաշնոյ քաղաքն ի Կաֆա, ի զանա ժա-
մանակս որ զօթաւ եախսմ ճալալիքն երեցին և
աւերեցին », և Ղազարաշին Մաֆարն ի դիմաց մի-
ամտի եկայք փախըստական. միթէ ի հոս հաճ-
չիմք. մա՛ վասմ մեր բազում մեղացն ի հոս մեծ
սով եղև որ ըմաւ մարդ տեսեալ չէր. զի մէկ
կապի՞ծ ցորեանմ զ կարմիր ելաւ. և Ա կարմիրն
Դժ և Ծ ըստակ. զոր Տէր Աստուած զբարին և
զողորմութիւնն տայ ամենայն աշխարհի, մամա.
ւանդ զաֆա քաղաքին, քարեխօտութեամբ սրբոց
երկմաւորաց և երկաւորաց ամեն:

Աւարտեցաւ սա թիւն ԽԾԻ (= 1606) յունվարի
Ա. ձեռամբ ամարժամ և ամպիտան Մոսփառոս
թոխաթի իրիցուն ի գրումս սուրբ Լուսաւորչին,
Որք բամ իմէ օգտիք՝ յիշեցէք և ասէք « չայր
մեր որ յերկինս »:

Մոյմ տաղարանին մէջ (էջ 74) կայ հետեւեալ
քերթուածը սա խորագրով « Տաղ զարմամ՝ վար-
դին և պուլպուլին զորոցք և պատասխանիք՝ Խա-
լատուր Կէշառեցի վարդապետի ասացեալ ». և
կը սկսի

Ի զենալն վարդին, եկեալ պուլպուլին.

Տաղիս ոմը և լեզուն որ այնքան կուռ չէ՝ վաւե-
րականութեամ մասին կասկածելի է և կը թուի
վեշտասամբերող դարու տաղասացի մը գործն
ըլլալ:

Քերթուածիս միւթը ինքնին մորութիւն մը չէ,
այսպէս երգած են Գրիգոր Աղթամարցիին և Յոր-
թամ՝ եղև զարում » ի անձամբ հեղինակ և այլք,
եւ արդէն Մոսփառոս թոխաթեցիին այս երեք
քերթուածներն ալ իրարու կից ընթերցանակած է:
Եէջ 57 սա խորագրով. « Այսուհետեւ սկսանիսք
զգարման զվարդին և զպուլպուլին տաղերն » և
մախ՝

Երթամ եղև զարուն եկ պուլպուլն այդին

յետոյ « Ի զմալն վարդին » և էջ 82 Գր. Աղթա-
մարցիոյ

Եստ զենալոյ վարդին եկ պուլպուլն այդին:

Այս երեք քերթուածներն ալ ինչպէս որ մօտ
են թէ՛ ձեռագիրս մէջ և թէ՛ գաղափարով՝ երեքն
ալ մոյմ տաղաշափութեամբ գրուած են:

« Երթամ եղև զարում »-ը մեզի շատ համդի-
պած է Տաղարանաց մէջ և ոմամ տաճկերմ
թարգմանութիւնն ալ ունին, ինչպէս է մերկայ
ձեռագիրս. և Գ. Չոստանեանց իր թողութանոյ-
քին մէջ հրատարակած է զայս: Քերթուածիս
տաճկ սկզբնատառերը կը յօդան « Եարմարեալ